ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. մարտի 21-ից 25-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանի՝ Նյու Յորք (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Գայանե Գաբրիելյան
2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ
3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**
   Նյու Յորք (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
   2023թ. մարտի 21-ից 25-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ՄԱԿ
5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցելու «Ջուրը կայուն զարգացման համար» համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

«Ջուրը կայուն զարգացման համար» եռօրյա համաժողովը կազմակերպվել էր Նիդերլանդների Թագավորության և Տաջիկստանի Հանրապետության կողմից Կայուն զարգացման 6-րդ նպատակներին (SDG6) հասնելու նպատակով, որոնք են ներառում են մինչև 2030 թվականը բոլոր մարդկանց անվտանգ ջրի և սանիտարական ջրահեռացման հասանելիություն ապահովումը:

Համաժողովի քննարկումներին մասնակցել են երկրների ղեկավարներ, նախարարներ, փոխնախարարներ, բիզնես առաջնորդներ, գիտնականներ: Հայաստանի Հանրապետությունից համաժողովին մասնակցել է Գայանե Գաբրիելյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում ընգրկված է ՏԿԵՆ Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ Կարեն Դաղբաշյանը:

Մասնակից երկրները ներկայացրել են ԿԶՆ6-ի (Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ) և այլ ԿԶՆ-ների միջև փոխկապակցվածության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն և կիսվել են ջրի հետ փոխկապակցված ԿԶՆ-ների իրականացման ուղղությամբ ազգային փորձի լավագույն օրինակներով, ինչպես նաև առաջարկներով:

Համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել վեց ինտերակտիվ երկխոսություն, որոնցից հինգին մասնակցել է Գայանե Գաբրիելյանը հետևյալ թեմաներով.

- «Ջուրը հանուն առողջության» (*Water for Health: Access to WASH, including the Human Rights to Safe Drinking Water and Sanitation),*
- «Ջուրը հանուն կայուն զարգացման» (*Water for Sustainable Development: Valuing Water, Water-Energy-Food Nexus and Sustainable Economic and Urban Development),*
- «Ջուրը կլիմայի համար» (*Water for Climate, Resilience and Environment: Source to Sea, Biodiversity, Climate, Resilience and DRR),*

- «Ջրային համագործակցություն. անդրսահմանային և միջազգային ջրային համագործակցության համար» (*Water for Cooperation: Transboundary and International Water Cooperation, Cross Sectoral Cooperation, including Scientific Cooperation, and Water Across the 2030 Agenda)*
- «Ջրային գործողությունների տասնամյակ» Տասնամյակի նպատակների իրականացման արագացում, այդ թվում՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Գործողությունների ծրագրի միջոցով *(Water Action Decade: Accelerating the implementation of the objectives of the Decade, including through the UN Secretary-General's Action Plan*):

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Գայանե Գաբրիելյանը ՄԱԿ-ի «Ջրի համաժողով 2023»-ին հանդես է եկել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ելույթով, որի ժամանակ անդրադարձել է ջրի և ջրահեռացման կայուն կառավարմանն առնչվող Հայաստանի առաջնահերթություններին և ընդգծել միջազգային համագործակցության կարևորությունը ՄԱԿ-ի Կայուն զարգացման 6-րդ նպատակի իրականացման գործում:

Նախարարի տեղակալը անդրադարձել է ջրային ոլորտում արդյունավետ կառավարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության քայլերին: Մասնավորապես նշվել է, որ.

- Հայաստանի Հանրապետությունը դիտարկում է ջրային ազգային քաղաքականության մոտարկումը ՄԱԿ-ի Բազմակողմ բնապահպանական համաձայնագրերի հետ, ինչպիսին է Ջրի և Առողջության մասին ՄԱԿ-ի ԵՏՀ Արձանագրությունը՝ համաձայն Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման կոնվենցիայի, կամ այլ գլոբալ պարտավորությունների, ինչպիսիք են ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները՝ որպես ջրային ռեսուրսների համալիր կառավարման սկզբունքներին համահունչ լրացուցիչ լծակ:
- Թեև Հայաստանը դեռևս չի վավերացրել այս կոնվենցիան և արձանագրությունները, դրանք ծառայում են որպես ուղեցույց ազգային քաղաքականության մշակման ժամանակ: Հայաստանը պարբերաբար կամավոր զեկույցներ է ներկայացնում Միավորված ազգերի կազմակերպությանը, մասնավորապես Ջրի և Առողջության մասին Արձանագրության վերաբերյալ, և այս առումով զգալի առաջընթաց է ձեռք բերվել ազգային ոլորտային թիրախները և Գործողությունների ծրագրերը Արձանագրությանը համապատասխանեցնելու հարցում: 2020 թվականին Հայաստանը մշակել է Կայուն զարգացման 6-րդ նպատակին հասնելու ռազմավարությունը, որը ներառում է մանրամասն ելակետային վերլուծություն և Կայուն զարգացման նպատակների թիրախներին հասնելու սպառնալիքների բացահայտում:
- Ջրային քաղաքականության հիմնական բարեփոխումները Հայաստանի և Եվրամիության միջև 2017 թվականին

ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի մաս են կազմում: Համաձայնագիրը նախատեսում է ժամանակին համահունչ և հավակնոտ պարտավորություններ ջրային ռեսուրսների և որակի ոլորտում՝ կապված քաղաքային կեղտաջրերի մաքրման, խմելու ջրի, նիտրատների և ջրհեղեղների հարցերի հետ:

- Ջրային օրենսգրքի 2022 թվականի փոփոխությունները Հայաստանի օրենսդրությունը մեկ քայլով մոտեցրել են միջազգային լավագույն փորձին՝ ներառելով ջրի և սանիտարական հավասար հասանելիության, ինչպես նաև կլիմայի փոփոխության խնդիրները:
- 2022 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունել է Ջրային ոլորտի հարմարվողականության ծրագիրը և իր 5-ամյա Գործողությունների Ծրագիրը՝ կլիմայի փոփոխության նկատմամբ երկրի ջրային ռեսուրսների աճող խոցելիության դեմ պայքարելու նպատակով:
- Հայաստանի Հանրապետությունը 1999 թվականին ստորագրել է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Ջրի և առողջության մասին» արձանագրությունը և ներկայումս վերանայում է վավերացման մարտահրավերներն ու հնարավորությունները:
- 2017 թվականին Հայաստանի և ԵՄ-ի միջև ստորագրված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» ջրային քաղաքականության մեկ այլ կարևոր բարեփոխում է, որը ջրային ռեսուրսների և որակի ոլորտում պարունակում է հավակնոտ պարտավորություններ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հստակ սահմանում է այն բոլոր ուղղությունները և միջոցառումները, որոնք աջակցում են ջրային ոլորտում կառավարության կողմից մշակված ռազմավարության կյանքի կոչմանը: Այդ ամենն իր մեջ ներառում է գետավազանային կառավարման պլանի մշակումը, խմելու ջրի և ոռոգման համակարգի կազմակերպումը և կեղտաջրերի մշակումը և հեռացումը, ինչպես նաև մշտադիտարկման և մոնիթորինգի կազմակերպումը:

Ելույթի ժամանակ անդրադարձ է կատարվել նաև Ադրբեջանի պատվիրակության կողմից ջրային օրակարգը Հայաստանին ուղղված ապատեղեկատվությունը տարածելու բացահայտ չարաշահմանը: Քանի որ Ադրբեջանի նախարարի կողմից փորձ է կատարվել Լեռնային Ղարաբաղում 120 հազար բնակչության շրջափակումը ներկայացնել որպես «բնապահպանական բողոք», Գայանե Գաբրիելյանը հիշատակել է Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի որոշումը, որով Ադրբեջանին պարտավորեցրել է «ձեռնարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ ապահովելու մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղություններով», սակայն մինչ օրս Ադրբեջանը չի կատարել Դատարանի օրինական պարտավորեցնող հրամանը:

Գայանե Գաբրիելյանը հանդես է եկել ելույթներով «Ջուրը հանուն առողջության», «Ջուրը հանուն կայուն զարգացման», «Ջուրը կլիմայի համար» երկխոսությունների ժամանակ: Մասնավորապես նշվել է.

- Հայաստանի կառավարության համար ջրի ոլորտում անդրսահմանային և տարածաշրջանային համագործակցության կարևորությունը: Ամբողջությամբ գտնվելով Կուր-Արաքս գետի ավազանում՝ Հայաստանն ունի մի շարք երկկողմ համաձայնագրեր ջրերի միջազգային օգտագործման վերաբերյալ, ներառյալ Արաքսի անդրսահմանային գետի մակերևութային ջրերի որակի համատեղ մոնիտորինգի հաջողությամբ պսակված միջկառավարական պայմանագիրը:

- տնտեսական գործիքների կիրառման ընդլայնման տարբերակների ուսումնասիրության անհրաժեշտությունը: Ընդգծվել է միջազգային գործընկերների ֆինանսական մոբիլիզացման կարևությունը՝ զարգացող երկրներում առաջնահերթ միջոցառումներ իրականացնելու համար: Կարևորվել է տնտեսությունը, ֆինանսները և բնապահպանությունը եռակողմ հարթակում դիտարկելու կարևորությունը՝ հաջողության հասնելու համար:

- ջրային ռեսուրսների կառավարման ռազմավարությունների առաջնահերթության կարևորությունը, որը կարևոր դեր է խաղում առողջության, տնտեսությունների և բնական միջավայրի համար: Աճխածնի և ջրային ռեսուրսների ախտահանման մեղմացումը հիմնական պարտավորություններն են ապագա սերունդների կայուն զարգացման համար: Հայաստանի Հանրապետությունը լիովին հավատարիմ է արդյունավետ միջազգային համագործակցությանը՝ Ջրային Գործողությունների Օրակարգի իրականացման և կայուն զարգացման քաղաքականության մեջ ջրի և սանիտարական օրակարգի ավելի լավ ինտեգրվելու ուղղությամբ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցի ժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն մի շարք քայլերի իրականացման վերաբերյալ՝ բնապահպանական մարտահրավերներին կայուն, արդար և ճկուն լուծումներով դիմագրավելու նպատակով:

Ջրային համաժողովը ավարտվել է Ջրային գործողությունների օրակարգի ընդունմամբ, որը պարունակում է գրեթե յոթ հարյուր պարտավորություններ, որոնք ներառում են գործողությունների լայն շրջանակ՝ կարողությունների զարգացում, տվյալների և մոնիտորինգի համակարգերի, ենթակառուցվածքների ճկունության բարելավում:

Համաժողովի մյուս կարևոր արդյունք է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նախագահի ամփոփագիրը, որը ներառում է բազմաթիվ գաղափարներ, առաջարկություններ և լուծումներ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման ավարտին կողմերը հույս են հայտնել, որ այս համաժողովում ստանձնած պարտավորությունները մարդկությանը համար կապահովեն ջրի անվտանգ ապագա:

Դրան հասնելու համար ՄԱԿ Գլխավոր քարտուղարը կարևորել է առանցքային փոփոխությունները՝ անվտանգ ջրի, սանիտարական և հիգիենայի հասանելիության ապահովման համար: Կառավարություններին կոչ է արվել մշակել և իրականացնել ծրագրեր, որոնք կապահովեն ջրի հավասար հասանելիություն բոլոր մարդկանց համար՝ միաժամանակ նպաստելով ջրի պահպանմանը:

Համաժողովն նշանակալից է և՛ ջրի ճգնաժամի առաջացրած լուրջ մարտահրավերների հստակ ըմբռնման, և՛ դրա լուծման համար արդյունավետ լուծումներ գտնելու համար: Այս նախաձեռնության հետամուտ լինելն համահունչ է կլիմայի գլոբալ օրակարգի իրականացման ստանձնած պարտավորություններին և պահանջում է արդյունավետ համագործակցություն բոլոր գործընկերների հետ:

Հաջորդ համաժողովն առաջարկվել է անցկացնել Տաջիկստանում 2028 թվականին:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Գայանե Գաբրիելյան

30.03.2023թ.